

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ան պահուն երբ ազգերու հարցը իր բոլոր ընդարձակութեամբ խաղաղութեան խողովին հանդէպ կը կանգնի, թէ որ գիրք մը կայ որ ճիշտ ժամանակին կը հասնի, անտարակոյտ Հայ ժողովրդին Պատմութիւնն է, զոր կը հրատարակէ Ժաք տը Մոռկան՝ Եզդատական հնութեանց Սպասուն նախկին վերատեսուչը, «Հօյի պեղում» ներով հռչակուած մեծ հնախօսը, ինչպէս որ արժանապէս կ'անուանէ իր գեղեցիկ յառաջաբանին մէջ Կիւստապ Շլումպէրֆեր, մեծանուն բիւզանդագէտը:

Չկար Մոռկանէն աւելի յարմար մէկը սոյն հատորը գրելու համար, վասն զի, իր հնախօսի գիտութեան և միանալն լեզուագէտի, դրամագէտի, երկրաբանի խոր հմտութիւնը և երկրին կատարեալ ծանօթութիւնը:

Եւ իբրոք շատ տարիներէ ի վեր է որ հեղինակը Հայաստանը հետախուզած է, պեղումներ կատարելով, յատակագծեր անելով, դիրքեր և յիշատակարաններ գծելով: Մենք այդ աշխատութիւններէն այժմ կ'օգտուինք, վասն զի Հայ ժողովրդին Պատմութիւնը պատկերազարդ է շուրջ երեք հարիւր աշխարհացոյց քարտերով, յատակագծերով և վկայագիրներու գծագրութիւններով: Ամեն անգամ որ կարելի եղած է, կը գտնենք բնագրին մէջ յիշատակուած թագաւորներու կամ իշխաններու դրամաց արտադրութիւնը:

Բազմաթիւ են թագաւորները՝ յիշատակուած երկրի այս անկեան առիթով՝ կոտարան այնքան ցեղերու, այնքան այլազան կրօնքներու և իրարմէ այնքան տարբեր քաղաքակրթութեանց: Հայաստանը կը թուի ժամագրապայրը եղած ըլլալ արիւնհանդ կոնկներու աշխարհի չորս ծագերէն եկող և իրարու հետ չափուող ժողովուրդներու: Խաղաղութեան տարիները հոն շատ ցանցաւ եղած են. պատերազմներ, աւարառութիւններ, յեղափոխութիւններ, կոտորածներ, այս է այդ ժգեմախտ ազգին անցեալը ինչպէս ներկայն ալ:

Պարեւոր էր կատարեալ ոճ մ'ունենալ հասկնալի ընելու համար այսպիսի կնեռոտ պատմութիւն մը: Մոռկան՝ ըստ իւր սովորութեան՝ աւելն խուժերէ խուսափելով, ընթերցողը կը հասցունէ խաղաղ նաւահագիտ, սկսելով հեռուոր ժամանակներէ՝ յորս դարերու հնութեանց մէջ կորսուող նախկին շատ մը գաղթականութիւններէ վերջ, Հայերը՝ արիական մեծ ընտանիքին

անդամ՝ Թողուցին պալքանեան թերակզգին, անցան Ասիա, Փոնդգիան, Կասպաղղովկան կտրեցին և հաստատուեցան այդ երկրին մէջ ուր զանազան կը գտնենք այսօր: Երկրի անհարթ, լեռներու խառնակոյտ, որուն կը տիրէ իր հիանալի զազաթէն Արարատ, աշխարհին խնամակալ պահապանը, և որուն ձիւնածածք կատարը կը կարմրի և կ'ոսկեգոծի առաւօտուն՝ իբր ցնորաւ կան տեսիլ մը, երբ դեռ հովիտները մթութեան մէջ թաղուած են:

Առասպելական շրջանէն վերջ, Հայաստան Մարաց տիրապետութեան տակ կը մտնայ, յետոյ Աթենքեանց աւատառու կը դառնայ: Աղբրանդը Ասիոյ մէջէն իր յաղթական անցքի ժամանակ կ'ազատէ զայն Պարսից լծէն և ան իր սլացքը կ'առնու: Ս. Գրիգոր Լուսաւորչով քրիստոնէութիւնը ազգին կրօնքը կ'ըլլայ, զոր պիտի պահպանէ հակառակ հալածանքներու:

Խաչակրաց ժամանակ, Ֆրանսայի մեր նախնիք յարատե յարաբերութիւններ ունեցան Հայոց հետ, և Արեւմտեայց ընդ Արեւելեայս ամուսնուութիւնները ստեղծ եղան:

Իսկ Մեծի հետ Հայաստանի արքունիքը արեւելեան մարտով հանդերձ՝ լատին արքունեաց վրայ ձեռնկերպուած էր: Սակայն այդ ամէն ինչ պիտի ջնջուէր Մոնղոլներու և Թուրքերու հալածանքին տակ:

Հայ ժողովրդի Պատմութիւնը կը տանի ընթերցողը մինչև մեր օրերը, մինչև նոր կոտորածները և ռուս պետութեան անշատու մը: Մոռկան կը քննէ ապա Հայոց դիրքը իրենց երկրէն դուրս: Ցեռոյ սթանցիի համառոտութիւն մը կ'ընէ ինչ որ եղած է և է այդ ժողովրդին քով գրականութիւնը, արուեստը և գիտութիւնը: Հատորը կը վերջանայ ժամանակագրութիւններով որ կ'օգնեն արագօրէն գտնելու ոչ միայն ազգին թագաւորներու, պատրիարքներու և կաթողիկոսներու անունները և թուականները, այլ և օտար վարիչներու:

Յայտնի է թէ կը պակսէր մեր մէջ այսպիսի գիրք մը, և անկեղծօրէն շնորհակալ ենք Մոռկանի՝ առաջնորդման Ասիոյ Պատմութեան մէջ այս թերին այսպէս հիանալի կերպով լրացնելուն համար:

Կոմս Ժան տը Ֆենկորէյ
(Journal des Débats 25 մարտ 1919)

Թարգմ. Հ. Գեորգիւ ԶԲԵՐԵԱՆ